

Հայտերի ներկայացման հրավեր

Ամսաթիվ. **02 հոկտեմբեր, 2017**

Վարկի No. և անվանում. **2993-ARM, Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 3**

Պայմանագրի No. և անվանում. **T3-G-1, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության համար լաբորատոր սարքավորումների մատակարարում և տեղադրում**

Հայտերի ներկայացման վերջնաժամկետ. **15 նոյեմբերի 2017, ժամը 11:00 (Երևանի ժամանակով):**

1. Հայաստանի Հանրապետությունը Ասիական զարգացման բանկից (ԱԶԲ) ստացել է վարկ, **Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 3** ծախսերը հոգալու համար և նախատեսում է այդ վարկի գումարից վճարումներ կատարել վերը նշված պայմանագրի ներքո: Մրցույթը բաց է ԱԶԲ-ի կողմից սահմանված իրավասու երկրների ծագում ունեցող հայտատուների համար:

2. **ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը** (Պատվիրատու) հրավիրում է ներկայացնել փակված հայտեր իրավասու հայտատուներից **ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության համար լաբորատոր սարքավորումներ մատակարարելու և տեղադրելու համար:**

T3-G-1, Լաբորատոր սարքավորումների մատակարարում և տեղադրում պայմանագիրը ներառում, բայց չի սահմանակում ստորև նշված հիմնական սարքավորումները.

1. Հորատման մեքենասարքավորում
2. Կոմպրեսոր 2000 KN բետոնի նմուշների դիմադրողականության չափման համար (ըստ սեղմման, դեֆորմացիայի)
3. Բետոնի դիմադրողականության չափման սարքավորում (ըստ դեֆորմացիայի)
4. Վակուումային մեքենասարքավորում իր աքսեսուարներով
5. Գրունտի խտության չափման սարքավորում (դինամիկ էլեկտրականություն)
6. Գրունտի ֆիլտրման ցուցիչի չափման սարքավորում (իր աքսեսուարներով)
7. Գրունտի խտության չափման էլեկտրական սարք (CBR խտացման սարք)
8. Ասֆալտի կապակցանյութի մշակման սարք
9. Ավտոմատացված համակարգով աշխատող խտացման սարք
10. Բետոնի փորձարկման թվայնացված մուրճ
11. Բիտումի էլաստիկության/ճկունության չափման սարքավորում իր աքսեսուարներով
12. Կլիմայի փոփոխությամբ աշխատող լուսանկարչական ապարատ, ջերմաստիճանը -25°C -ից $+70^{\circ}\text{C}$
13. Բետոնի ջրի թափանցելիության չափման սարքավորում
14. Լաբորատոր ասֆալտի խառնիչ

Լաբորատոր սարքավորումները խմբավորված են մեկ լոտի մեջ: Հայտատուն կարող է հայտ ներկայացնել միայն լոտի համար: Առանձին հայտեր չեն թույլատրվում:

3. **Միջազգային մրցակցային մրցույթը** կիրականացվի ԱԶԲ կողմից սահմանված Մեկ փուլ՝ մեկ ծրար ընթացակարգով, և մրցույթը բաց է մրցութային փաստաթղթերում նշված իրավասու երկրների ծագում ունեցող բոլոր հայտատուների համար:

4. Տվյալ մրցույթին կարող են մասնակցել միայն այն Հայտատուները, ովքեր կբավարարեն հետևյալ որակավորման չափանիշներին.

- Վերջին երեք (3) տարիների ընթացքում որպես հիմնական մատակարար, Հայտատուն պետք է հաջողությամբ իրականացրած լինի առնվազն մեկ (1) պայմանագիր 400,000 ԱՄՆ դոլար արժողությամբ՝ նմանատիպ բնույթի և բարդության, որը համապատասխանում է մատակարարման պայմաններին նկարագրված Բաժին 6-ում (Մատակարարման ժամանակացույց):
- Հայտատուի կողմից առաջարկվող ապրանքները (վերը թվարկված 1-10 համար) պետք է արտադրության մեջ լինեն առնվազն երեք (3) տարիների ընթացքում; և վաճառված լինեն (յուրաքանչյուրից առնվազն մեկ հատ) նմանատիպ բնույթի և մասնագրերի վերջին երեք (3) տարիների ընթացքում:
- Հայտատուն պետք է ներկայացնի իր ֆինանսական վիճակի կայունությունը: Հայտատուի կապիտալը, որը հաշվարկվում է որպես ընդհանուր ակտիվների և ընդհանուր պարտավորությունների տարբերություն պետք է լինի դրական առնվազն վերջին մեկ (1) տարվա համար: Միջին նվազագույն շրջանառությունը պետք է

կազմի 1,000,000 ԱՄՆ դոլար, որը հաշվարկվում է որպես վերջին 3 (երեք) տարիների ընթացքում ավարտված կամ ընթացքի մեջ գտնվող պայմանագրերից ստացված ընդհանուր վճարումներ:

5. Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և մրցութային փաստաթղթերը ուսումնասիրելու նպատակով՝ հայտատուները կարող են դիմել:

Աստղիկ Սահակյանին, Գնումների և պայմանագրերի կառավարման բաժնի պետ
Տրանսպորտային ծրագրի իրականացման կազմակերպություն ՊՈԱԿ
Հասցե. Տիգրան Մեծ 4, Երևան, 0010, ՀՀ
Հեռ.: (+37412) 20-10-09 (10)
Էլ. հասցե. info@northsouth.am

6. Հետաքրքրված հայտատուների կողմից **T3-G-1, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության համար լաբորատոր սարքավորումների մատակարարում և տեղադրում** մրցութային փաթեթը ամբողջապես անգլերեն լեզվով կարելի է ձեռք բերել վերոնշյալ հասցեով գրավոր դիմում ներկայացնելու և 20,000 ՀՀ դրամ կամ 40 ԱՄՆ դոլար գումարի չափով չհատուցվող գումար վճարելու պարագայում: Նշված գումարի վճարման եղանակն է բանկային փոխանցումը հետևյալ հաշվին

ՀՀ տարածքում ՀՀ դրամով փոխանցումների համար	ՀՀ տարածքից դուրս ԱՄՆ դոլարով փոխանցումների համար
<p>Շահառու. Տրանսպորտային ծրագրի իրականացման կազմակերպություն ՊՈԱԿ Հարկ վճարողի կոդ. 02702598</p> <p>Շահառուի բանկ. Արարատբանկ ԲԲԸ Հասցե՝ ՀՀ, Երևան, Պուշկինի 19 Հ/հ. 1510009017860500</p>	<p>Շահառու. Տրանսպորտային ծրագրի իրականացման կազմակերպություն ՊՈԱԿ Շահառուի բանկ. Արարատբանկ ԲԲԸ Հասցե՝ ՀՀ, Երևան, Պուշկինի 19 հ/հ. 1510009017860301 SWIFT: ARMCAM22</p> <p>Այլ Բանկեր: Standard Chartered Bank, New York, USA Հասցե. One Madison Avenue, New York, NY, 10010-3603 SWIFT: SCBLUS33. Routing No 026002561</p> <p>IBAN: 358 202 357 10 01</p> <p>կամ</p> <p>CitiBank N.A., New York, USA Հասցե. 111 Wall Street, New York, NY, 10043 SWIFT: CITIUS33</p> <p>IBAN: 362 547 74</p> <p>կամ</p> <p>Raiffeisen Zentralbank Oesterreich AG SWIFT: RZBAATWW</p> <p>IBAN: 070-55.076.558</p>

Մրցութային փաստաթղթերը կառաքվեն օդային փոստով՝ Երևանից դուրս առաքելու համար, և առաքիչի միջոցով՝ Երևան քաղաքի տարածքում: Որևէ մեկը պատասխանատվություն չի կրում մրցութային փաթեթի կորստի կամ ուշ առաքման համար: Մրցութային փաթեթի թղթային տարբերակից բացի, անհրաժեշտության դեպքում այն կուղարկվի նաև էլեկտրոնային փոստով: Թղթային և էլեկտրոնային տարբերակների միջև անհամապատասխանության դեպքում, գերակայում է թղթային տարբերակը:

7. Հայտերը պետք է ներկայացվեն վերևում նշված հասցեով (5-րդ պարբերությունում) **մինչև կամ 2017թ. նոյեմբերի 15-ը, ժամը 11:00** (Երևանի ժամանակով): Բոլոր հայտերը պետք է ուղեկցվեն մրցութային փաստաթղթերում նշված Մրցութի ապահովման երաշխիքով:

Ուշացված հայտերը կմերժվեն: Հայտերը կբացվեն անմիջապես նույն օրը մասնակցելու ցանկություն ունեցող հայտատուների ներկայացուցիչների ներկայությամբ:

8. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը պատասխանատվություն չի կրում հայտատուների կողմից հայտերի պատրաստման կամ առաքման հետ կապված ծախսերի համար: